

ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների Հարգարժան նախագահներ,
Հարգելի պատգամավորներ

Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեն կատարվել է **97.5 տոկոսով**, ծրագրավորված **3130.7 մլն.դրամի** դիմաց փաստացի կատարողականը կազմել է **3051.8 մլն.դրամ**, որը պակաս է 2015 թվականի ցուցանիշից (**3694.0 մլն.դրամ**) **17.4 %-ով** կամ **642.2 մլն. դրամով**:

Նշված հատկացումը կազմում է բնապահպանական նպատակներով հավաքագրված բնապահպանական և բնօգտագործման վճարների (2016թ. ցուցանիշը՝ **27381.0 մլն.դրամ**) և ոչ հարկային (պետական տուրք, պատժամիջոցներ) եկամուտների (**100.3 մլն.դրամ**) հանրագումարի (**27481.3 մլն.դրամ**) **11.1 տոկոսը**:

2015 թվականի համեմատ ծախսերի կրճատումը պայմանավորված է հիմնականում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային («Արփի Լիճ» ազգային պարկի ստեղծման) ծրագրի ավարտման (2015թ. համեմատ ֆինանսավորման ծավալի նվազումը՝ **176.0 մլն.դրամ**), միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման ծավալների նվազման (**142.0 մլն.դրամ**), ինչպես նաև «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի ոչ բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորման (**58.3 մլն.դրամ**), «Ջրավազանային կառավարման պլանի մշակման և կազմման ծառայություններ» ծրագրի բյուջետային հատկացումների դադարեցման (**49.3 մլն.դրամ**), «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծավալների նվազման (**203.0 մլն.դրամ**) կառավարման ապարատի և ՊՈԱԿ-ների պահպանման ծախսերի կրճատման հետ (**13.6 մլն.դրամ**):

Առանց միջազգային դրամաշնորհային ծրագրերի բյուջեի կատարողականը նախարարության մասով կազմել է **2 973.1 մլն.դրամ** կամ կատարվել է **98.4 տոկոսով**: Թերակատարումը պայմանավորված է եղել ծրագրերի փաստացի կատարողականի, գնումների գործընթացի շրջանակներում ձեռք բերված տնտեսումների հետ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում գնումների գործընթացի շրջանակներում տնտեսվել է **27.9 մլն.դրամ** բյուջետային միջոցներ:

Հատկացված ֆինանսական միջոցները ծախսվել են հետևյալ ծրագրերի վրա՝

Ա. Կառավարման ապարատի մասով (7 ծրագիր)

• **1423.0 (73.3+ 1349.7) մլն.դրամ** հատկացվել է պետական կառավարման մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարի և նախարարության աշխատակազմերի պահպանմանը՝ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, կապիտալ ծախսերի գծով հատկացումներ չեն եղել:

- Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում՝ **27.6 մլն. դրամ,**
- «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանում ծրագրի ֆինանսավորման մասով՝ **73.9 մլն. դրամ,**
- դատարան տրվող հայցադիմումների հետ կապված ծախսերի ֆինանսավորման համար - **0.2 մլն.դրամ,**
- արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների հետ կապված ծախսերի ֆինանսավորման համար - **1.3 մլն.դրամ,**
- արտասահմանյան պաշտոնական գործուղումների գծով ծախսերի համար - **4.0 մլն.դրամ:**

Բ. Ծրագրային ֆինանսավորում (առանց միջազգային դրամաշնորհային ծրագրերի) - 19 ծրագիր

« 2016 թվականին նախարարությունն իրականացրել է բնապահպանական կամ բնապահպանական ուղղվածություն ունեցող **19** ծրագիր, որոնց գծով բյուջետային հատկացումները կազմել են **1443.1 մլն.դրամ,** այդ թվում՝

ա) նախարարության համակարգում գործող 13 պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման ծախսերի ֆինանսավորման համար՝ - 1178.3 մլն.դրամ:

	« Ը բնապահպանության նախարարության համակարգի ՊՈԱԿ-ները	2016թ. բյուջետային ֆինանսավորում /մլն.դրամ/
1	«Թափոնների ուսումնասիրության կենտրոն»	16.7
2	"Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն"	160.6
3	«Սևան» ազգային պարկ»	261.1
4	«Դիլիջան» ազգային պարկ»	137.4
5	«Արգելոցապարկային համալիր»	134.3
6	«Խոսրովի անտառ» պետական արգելոց»	121.1
7	«Ջանգեղուր» կենսոլորտային համալիր»	135.3
8	«Արփի լիճ» ազգային պարկ»	41.8
9	«Ջիկատար» պետական արգելավայր»	15.6
10	<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>>	45.3
11	«Տեղեկատվական վերլուծական կենտրոն»	20.5
12	«Հիդրոերկրաբանական մոնիտորինգի	45.5

	Կենտրոն»	
13	«Հայաստանի բնության պետական թանգարան»	43.1

բ) Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված 2 ծրագրերի
Ֆինանսավորման համար՝ 125.3 մլն.դրամ, որից՝

- Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծրագիր - **7.6 մլն.դրամ.**

Ծրագրի իրականացման արդյունքում արձանագրվել է՝

ա/ սիգ ձկնատեսակի միջին խտությունը 2016 թվականին 2013թ. համեմատ աճել է 80,0 տոկոսով՝ 2,0 կգ/հա հասնելով 3,6 կգ/հա, իսկ ձկան ընդհանուր զանգվածն աճել է 38,9 տոկոսով՝ 324,0 տ-ից հասնելով 450,0 տ:

Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարները 2016թ. կազմել են 4582տ, որից 2017թ. համար թույլատրելի որսաչափը կկազմի 1100տ:

- **Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ – 117.7 մլն.դրամ:** Շեղումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով. նախատեսված 93 հա-ի դիմաց աշխատանքներ են իրականացվել 88.8 հա տարածքներում:

Չկատարված աշխատանքների կատարման համար նախատեսված գումարը կապալառուին չի վճարվել: Միաժամանակ նրա նկատմամբ հաշվարկվել և կիրառվել է 456,7 հազ.դրամ տույժ և 614,2 հազ.դրամ տուգանք:

Բացի նշվածից,

- «Վոթերմաստեր» մաքրող ագրեգատի վարձակալության դիմաց մաքրվել է **5 հա տարածք,**

-«<Սևան>> ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և թվով 3 ֆիզիկական անձանց միջև կնքված Սևանա լճի ափամերձ անտառտնկարկների մաքրման աշխատանքների պայմանագրերի կատարման շրջանակներում ընդհանուր առմամբ մաքրվել է **13.03 հա մակերեսով** ջրածածկման ենթարկվող անտառների տարածք:

գ) 4 այլ ծրագրերի մասով՝ 139.5 մլն.դրամ, որից

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ 9 (Ախթալա, Օձուն, Կապան, Քաջարան, Լեռնաձոր, Ագարակ, Կարճևան, Արարատ և Չարենցավան) համայնքներին սուբվենցիաների տրամադրման համար – **89.7 մլն.դրամ,**

- գայլերի թվաքանակի կարգավորման հետ կապված միջոցառումների ֆինանսավորման համար **24.7 մլն. դրամ** (ոչնչացված գայլերի դիմաց տրամադրվել է 200 հատ պարզևավճար),

- ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում գոյություն ունեցող՝ ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող և բացասական մակարդակով հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացման համար՝ **18.0**

մլն.դրամ: Ծրագրի շրջանակներում լուծարվել է **6 հոր**, կոնսերվացվել՝ **21 հոր**, որի արդյունքում տարեկան խնայվելու է 2.99 մլն խմ ջուր:

• **Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի պահպանման ծախսերի ֆինանսավորման համար – 7.1 մլն.դրամ:**

Ծրագրի համար իրավական հիմք է ծառայում ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը (7.Ա.7. միջոցառում):

Գ. Միջազգային դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող 3 ծրագրերի մասով հարկացումները կազմել են՝ 78.7 մլն.դրամ:

Արդյունքում ավարտվել են ներքոհիշյալ ծրագրերը՝

- Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ազգային պորտֆելի ձևավորման վարժություն» ծրագիր,
- ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիաների կարիքների գնահատում» ծրագիր,
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օժանդակություն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագիր»: